ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2023թ. հուլիսի 7 -ին, N 248-Ա ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՉՔՆԱՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄՀԵՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մհեր Դավթյանի 2023 թվականի հուլիսի 4-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մհեր Դավթյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2022-2023 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2023 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 11-ը ներառյալ:
2. Մհեր Դավթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Չքնաղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Աննման Մկրտչյանի վրա:

3. Մեր Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 15-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 7/7/2023 16:39:27 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ